## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան Մետրոպոլիտենի կայարանների շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի փետրվարի 6-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 գնման պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 09.11.2023թ. N 1936-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06.02.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 գնման պայմանագրի

ք. Երևան «06» 12 2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 09.11.2023թ. N 1936-Ն որոշումը և Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան Մետրոպոլիտենի կայարանների շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ մատուցման համար Կողմերի միջև 06.02.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | «Հուսալի Կամար» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011042166 | Հ/Հ 11500990378803 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 09811047 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ________ Ա. Մկրտչյան (ստորագրություն) | ________ Վ. Առաքելյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
06.02.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 գնման պայմանագրի
.06.12.2023թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
06.02.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/647 | Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան Մետրոպոլիտենի կայարանների շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ՝ մասնավորապես. 1) «Բարեկամություն» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ, 2) «Մարշալ Բաղրամյան» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ, 3) «Երիտասարդական» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ, 4) «Հանրապետության հրապարակ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ, 5) «Սասունցի Դավիթ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ, | – | – | – | 3 880 000 | 3 880 000 | 3 880 000 | 5 118 300 | 5 118 300 | 5 118 300 | 5 118 300 | 5 118 300 | 41 000 000 | 41 000 000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 6) «Գործարանային» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ,<br>7) «Շենգավիթ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ,<br>8) «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ,<br>9) «Զորավար Անդրանիկ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ,<br>10) «Չարբախ» կայարանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ: | | | | | | | | | | | | | |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011042166
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

__________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<Հուսալի Կամար>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 11500990378803
ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝

__________________ Վ. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

BANK
**AMIO**

N 8509-02

«05» 12 2023

## ԵՐԱՇԽԻՔ
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՀՈՒՍԱԼԻ ԿԱՄԱՐ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պայմանագրի թիվ 1 համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2.Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,500,000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պայմանագրի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 30.06.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի
Կորպորատիվ բիզնես վարկերի վերլուծության և կառավարման
վարչության Կորպորատիվ բիզնեսի վերլուծության
բաժնի պետ՝ Ա. Թովմասյան

BANK
AMIO

N 8508-02

«05» 12 2023

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՅՈՒՍԱԼԻ ԿԱՄԱՐ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 պայմանագրի թիվ 1 համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 8,250,000 (ութ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5.Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 ծածկագրով կնքվելիք պայմանագրի թիվ 1 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ,բայց ոչ ուշ քան 30.06.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/27 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի
Կորպորատիվ բիզնես վարկերի վերլուծության և մշտադիտարկման
վարչության Կորպորատիվ բիզնեսի վերլուծության
բաժնի պետ՝ Ա. Թովմասյան